կը բռնանայ որ մահմետական կրօնը ընդունի, Խանում չընդունիր, մայրը շէյխերու կը դիմէ, որք ատեան կենթարկեն, կը բռնանան. նա խիստ պատասխաններ կտայ, գիշեր մի կը չարչարեն, և յօշոտելով գազանաց առջև կը ձգեն, ուրիշ գիշեր մի հայեր Խանումի նշխարներն կը հաւաքեն, քանի անգամ նորա նշխարաց վերայ լոյս իջած տեսնելէ յետոյ, կամիոփեն գերեզմանատան մէկ անկիւնն, որպէս ասացի։

Ամեն գերեզմանատուն մտնող երբ կանցնի աղբիւրի մօտէն առաջին անգամ Խանումի փոքրիկ քարակոյտին կը պատահի, եթէ իգական սեռէն է «Աստուած օղորմի» մի պիտի ասէ ու անցնի։

Կոյս Խանումի վերայ Բազմավէպի «1859 Թ. Ե. 70» ի մէջ մի ընդարձակ տաղ տեսած եմ «Տաղ ի վկայութի Ս. Խանում նահատակ ի Թոփրագ-գալէ» վերնագրով։

Վարժարանք.—Ալաշկերտի գաշի մէջ երկու արական մէկ իգական վարժարան կայ միայն, որ բացած է Հայոց միացեալ ընկերութիւնը։

Իգական սեռի վարժարանն ևս Հ. Միաց. ընկ. հսկողութեան ներքև է, ծախքը Աղգանուէր Հայուհեաց ընկերութեան կողմէ կը վճարուի. ուր կը կարդան 50-ի չափ աշակերտուհիք։

Արականաց ուսումնարանը մին Թոփրագ-գալէի, միւսն ևս Խասատուր գիւղի մէջ են. որոց ծախքը մասամբ մի կը հոգացուի ընկերութեան արկղէն, մասամբ մի ևս վերջին պատերազմին յանուն Ալաշկերտի գաղթականութեան հաւաքուած դրամին աւելցածին տոկոսովն, որ Գէորգ Դ. Ս. Կաթուղիկոսն այդ յաւելուած 17,000 ռուպլին ձգած էր Թուսաց բանդը, և